Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Գարիկ Պետրոսյան, ՀՀ ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Ալմաթի, Ղազախստան, 2023 թվականի հունիսի 8-ից 10-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ) և Ղազախստանի ազգային բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Մասնակցություն Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոնի (CCAMTAC) պաշտոնական բացման արարողությանը և դրան հաջորդող ԱՄՀ-ի կողմից կազմակերպվող «կլոր սեղան» ֆորմատով քննարկմանը:

5. Քննարկված թեմաները՝

ԱՄՀ-ի կողմից կազմակերպված քննարկումների ընթացքում CCAMTAC-ի գործունեության տիրույթում գնվող 9 երկրների (Կովկասի, Կենտրոնական Ասիայի երկրներ և Մոնղոլիա) հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության ինստիտուտների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից քննարկվել են գնաճի և դրան արձագանքման ուղղությամբ դրամավարկային քաղաքականության իրականացման շրջանակների, երկարաժամկետ կառուցվածքային մարտահրավերների պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության բարելավման հնարավորությունների,

ինչպես նաև CCAMTAC-ի և ԱՄՀ-ի կողմցի տարածաշրջանում կարողությունների զարգացման դերի վերաբերյալ հարցեր:

Մասնավորապես քննարկվել են գնաճային ճնշումների պահպանման վերաբերյալ սպասումները, գնաճի տեմպի նվազեցման գործում կենտրոնական բանկերի գործողությունների սահմանափակվածությունները, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության առջև ծառացած հիմնական խնդիրները:

Հարկաբյուջետային քաղաքականության վերաբերյալ քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել հարկաբյուջետային կանոնների կիրառությանը և դրանց արդյունավետությանը, քննարկվել են տարածաշրջանում հարկաբյուջետային կայունության մարտահրավերները և դրանց պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ամրապնդման համար անհրաժեշտ քայլերը: Անդրադարձ է կատարվել նաև ավելի կանաչ (ավելի կլիմայական չեզոք) քաղաքականությանն աջակցելու համար անհրաժեշտ գործողություններին:

Քննարկման երրորդ հատվածում ներկայացվել է քաղաքականության մշակմանը և որոշումների կայացման գործընթացում CCAMTAC-ի կարողությունների զարգացման ապահովման դերը, քննարկվել են կարողությունների զարգացման այլընտրանքային ձևաչափերի (վիրտուալ, անհատական, հիբրիդային, տարածաշրջանային գործընկերների հետ համատեղ) առավելությունները: Անդրադարձ է կատարվել նաև այն հարցերին, թե ինչպես կարող է CCAMTAC-ը լավագույնս աջակցել տարածաշրջանի երկրների հետ ԱՄՀ կարողությունների զարգացման առաքելությանը և որոնք են հիմնական առաջնահերթությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

CCAMTAC-ի պաշտոնական բացման արարողությունից հետո կազմակերպված «կլոր սեղան» ֆորմատով քննարկման ընթացքում ներկայացվել է ՀՀ-ում վերջին տարիներին հարկաբյուջետային կանոնների կիրառման փորձը: Մասնավորապես, նախ նշվել է հարկաբյուջետային նախկին կանոնների

փոփոխման անհրաժեշտությունը և նոր կանոնների սահմանման հիմնական նպատակները, ներկայացվել է ՀՀ արդիականացված կանոնների հիմնական բաղադրիչները: Քննարկման ընթացքում խոսվել է նաև վերջին տարիների բացասական շոկերի (համավարակ, Արցախյան պարտերազմ) դիմակայման հարցում հարկաբյուջետային կանոններով սահմանված «բացառիկ դեպքերի» կարգավորումների կիրառման, ինչպես նաև կառավարության պարտքի բեռի նվազման, հարկաբյուջետային քաղաքականության նկատմամբ վստահության բարձրացման և պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի բարելավման գործում ՀՀ հարկաբյուջետային արդիականացված կանոնների էական դերակատարման մասնին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների և քննարկումների ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Առկա չեն:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

13 հունիսի 2023թ.